

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ ՔԱԶԱՐԱՆԻ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ 28.08.2020



Քաջարան համայնքի սիրելի՛ բնակիչներ
Շնորհավորում եմ Քաջարանի հիմնադրման 62-րդ տարեդարձի կապակցությամբ, որը լրացավ մեկ շաբաթ առաջ, բայց եղանակային պայմանների պատճառով տոնակատարությունը հետաձգվեց, ուստի շնորհավորանքս ձեզ եմ փոխանցում այսօր, երբ տոնական տեսք է ստացել քաղաքը, երբ հանդիսավորությամբ նշվում է տոնը: Համավարակի պայմաններում միջոցառումներն առցանց են, բայց համոզված եմ՝ դա չի մթազնի հարազատ քաղաքի հանդեպ ունեցած սերն ու տոնի զգացողությունը: Անգնահատելի է Քաջարանի դերը մեր հանրապետության արդյունաբերության ու առհասարակ՝ տնտեսության մեջ: Եվ ունեցած ուրույն դերի, հնարավորությունների, ստեղծած բարենպաստ աշխատանքային միջավայրի շնորհիվ Քաջարանն այսօր հայրենիք է ոչ միայն ծնունդով քաջարանցիների , այլև իր այն բազմաթիվ բնակիչների համար, որոնք այստեղ են հաստատվել Հայաստանի տարբեր բնակավայրերից, որոնց համար արդեն Քաջարանը հարազատ քաղաք է, եւ այսօրվա տոնը եւս իրենցն է: Նրանք այստեղ են բերել նաեւ իրենց տարբեր հետաքրքիր սովորույթներն ու ավանդույթները եւ բնիկ քաջարանցիների հետ ապրում, արարում են, իրենց աշխատանքով կերտում Քաջարանի ապագան:

Այսօր պետք է շնորհակալ լինել նաեւ նրանց, ովքեր ժամանակին կառուցել են քաղաքը, ամուր ու կայուն հիմքերի վրա դրել հանքարդյունաբերությունը: Եվ բոլորս ենք տեսնում օր-օրի բարեկարգվող ու ծաղկուն տեսք ստացող ոչ միայն Քաջարան քաղաքը, այլև իր հարակից բնակավայրերը: Ուստի պատահական չէ, որ Քաջարանը գրավիչ է ու շարունակում է այստեղ կանչել բոլորին:

Լեռնագործների քաղաքի սիրելի՛ բնակիչներ, բոլորիդ մաղթում եմ անսպառ եռանդ, նվիրվածություն հայրենի Քաջարանին ու մեր հայրենիքին:

Խաղաղություն, ջերմություն ու բարեկեցություն՝ ձեր ընտանիքներին:

Շնորհավոր՛ր Տոնդ, Քաջարան: